




ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՀԱՅԱԳԵՏԸ

(Պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանի ծննդյան 70-ամյակի առթիվ)

Ս. Տ. ՂԱՆԱԿԱՆՅԱՆ

Պրոֆեսոր Կարապետ Մելիք-Օհանջանյանը մեր ճանաչված, վաստակավոր գիտնականներից է, դասական հայագիտության ու արևելագիտության ճշմանավոր դեմքեր՝ Կոստանյանի և Կրիմսկու, Ն. Ադոնցի և Վեսելովսկու, Մ. Աբեղյանի և Մարկվարտի արժանավոր սանն ու հետևորդը, նրանց գիտական լավագույն ավանդների տարածողն ու շարունակողը մեր օրերում, միջին և կրտսեր սերնդի ժամանակակից հայագետներից ու գրականագետներից շատերի անփոփոխ ուսուցիչն ու խորհրդատուն։

Կարապետ Մելիք-Օհանջանյանը ծնվել է Եկերու շրջանի Կալեր գյուղում, 1893 թ. փետրվարի 20-ին (ն. տ. մարտի 4-ին)։ Նրանց ընտանիքը բաղմանդամ էր։ Հոր միջոցները չեն ներել զավակներին քաղաքում կրթություն տալու, ուստի և այդ դժոժը սիրահոժար իր վրա է վերցրել նրա հորեղբայրը՝ Փարսադան Կարապետի Մելիք-Օհանջանյանը։



Իր նախնական կրթությունը Կ. Մելիք-Օհանջանյանը ստացել է հորեղբոր հարկի տակ՝ Գանձակ քաղաքում։ Նա հաճախել է նախ քաղաքի մասնավոր դպրոցներից մեկը, ապա՝ տեղի Տղայոց գիմնազիան։ 1903—1904 ուսումնական տարում հորեղբոր գործադրած համառ ջանքերի շնորհիվ պատանի Կարապետը ընդունվում է Մոսկվայի համրավարկ Լազարյան ճեմարանը։ 1911 թ. ավարտելով ճեմարանի դասարանական բաժինը, նա անցնում է նույն դպրոցի արևելագիտական մասնագիտական դասարանները։

Լազարյան ճեմարանի դասարաններում նրա սիրած դասատուներից է եղել գրականագետ Կարապետ Կուսիկյանը՝ Խաչատուր Աբովյանին նվիրված «Հանճարեղ սիրտ» խորագրով հայտնի հոգվածի հեղինակը, որի ներշնչմամբ էլ նա սկսում է սիրել մայրենի լեզուն ու գրականությունը և որոշում նվիրվել հայագիտական առարկաների ուսումնասիրությանը։ Ճեմարանի մասնագիտական լսարաններում Մելիք-Օհանջանյանի ուսուցիչ-դասախոսներն են եղել՝ անվանի հայագետ Կարապետ Կոստանյանը, հայտնի արևելագետ-ակադեմի-

կոսներ՝ կրիմսկին ու Կորշը, Ալեքսեյ Վեսելովսկին ու Գորդլևսկին, որոնցից շատ բան է ստացել ու յուրացրել նա:

Նույն Հաղարյան ճեմարանում Մելիք-Օհանջանյանի հասակակից ու ավագ, հայ և ալլաղգի ընկերներն ու ծանոթներն են եղել հետադայում նշանավոր հեղափոխական գործիչներ Ալեքսանդր Մյասնիկյանը, Հայկ Հովսեփյանը, Փանյանը, Կուրսևը, անվանի գրողներ, ֆնադատներ ու բանասերներ Վահան Տերյանը, Պողոս Մակինցյանը, Յուլիկ Խանզադյանը, Հովսեփ Կուսիկյանը, համբավավոր արևելագետներ Ստարիկովն ու Բարանովը, մաթեմատիկոս Մենշովը և ուրիշներ, որոնց հետ իր ուսանողական տարիներին շփման մեջ է եղել նա:

1914 թ. Հաղարյան ճեմարանի լսարանների պրոֆեսորական խորհուրդը որոշում է ընդունում Մելիք-Օհանջանյանին, իրրև շնորհունակ և գերազանցիկ ուսանողի, գործողել Գերմանիա՝ գերմաներենի գիտելիքները խորացնելու և պրոֆեսոր Ենգենի մոտ սանսկրիտ սովորելու նպատակով: Նույն թվականին՝ գալով Բեռլին, նա տեղավորվում է այնտեղ գտնվող Ավետիք Բսահայկյանի բնակարանում, ընկերական ու բարեկամական ամենամոտ կապերով կապվում բանաստեղծի հետ և մնում է նրա բնակարանում մինչև վերջինիս ժնև տեղափոխվելը:

1915 թ. Մելիք-Օհանջանյանը Բեռլինում ուսանող, հետադայում ականավոր հեղափոխական, Հովսեփ Հաղյանի միջոցով մտոիկից ծանոթանում է աշխարհահռչակ հայագետ Յոզեֆ Մարկվարտի հետ և նրա միջնորդությամբ թույլտվություն է ստանում որպես ազատ ունկնդիր հաճախելու Բեռլինի համալսարանը, ուր նա սկսում է դասախոսություններ լսել իրեն հետաքրքրող մի շարք կարևոր առարկաներից (հայերեն, ավեստա, պարսկերեն, դադա-բրդերեն, իրանական էպոս, էգեյան կուլտուրա, Հռոմեական կայսրության պատմություն, ասորական գրականություն, հին հունարեն, բյուզանդական հունարեն), որոնք կարդում էին այնպիսի նշանավոր մասնագետներ, ինչպիսիք էին պրոֆեսորներ Մարկվարտը, էդվարդ Մայերը, Ջախաուն, Շմիդտը և ուրիշներ:

Բեռլինում նա մտերմանում է հատկապես պրոֆեսոր Մարկվարտի հետ, վերջինիս ցանկությամբ շարաթական երկու անգամ լինում նրա տանը, օգնում իր սիրելի ուսուցչին հայկական լաբրատորիա հետադոտելու գործում, զբաղաբ բնագրերի հետ համեմատում մեր մատենագիրներից նրա կատարած թարգմանությունները:

1920 թ. Կ. Մելիք-Օհանջանյանը դալիս է Երևան և աշխատանքի անցնում տեղի Տղայոց գիմնադիայում: Այստեղ էլ նա ծանոթանում է Եղիշե Չարենցի: Վերջինիս հետ ունեցած իր հաճախակի հանդիպումների ժամանակ նա շատ դրույցներ է ունենում հայ և եվրոպական գրականության հարցերի շուրջը, բանաստեղծի խնդրանքը նրա համար բառացի թարգմանում է մի շարք հատվածներ գերմանական պոեզիայից:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո, 1920 թ. դեկտեմբեր ամսին, Կ. Մելիք-Օհանջանյանը, Բեռլինի իր երբեմնի մտերիմ ընկերոջ՝ Հովսեփ Հաղյանի հրավերով, տեղավորվում է վերջինիս գլխավորած Կարմիր բանակի քաղվարչությունում, իրրև այդ վարչության կուլտուր-կրթական բաժնի վարիչ և «Կարմիր բանակ» թերթի խմբագիր: Նույն թվականին նա միաժամանակ սկսում է աշխատել նաև Հայաստանի ժողովրդական հա-

մայսարանում՝ իբրև Լուսժողովոմի լիազոր ներկայացուցիչ Համայնարանի վարչության մեջ և իբրև հայ գրականության ու գերմաներենի դասախոս:

1921 թ. մայիսի 1-ից Մելիք-Օհանջանյանը Հայաստանի Լուսավորության ժողովրդական կոմիտեի արհեստի կողմից նշանակվում է հորհրդային Հայաստանի՝ էջմիածնում գտնվող առաջին գիտական ինստիտուտի նախագահ: 1922 թ. նորից Երևան փոխադրվելով Մելիք-Օհանջանյանը անցնում է մանկավարժական-մեթոդական աշխատանքի և մինչև 1930 թ. գործում է տվյալ ասպարեզում՝ լինելով Երևանի պետական համայնարանի և մանկավարժական ինստիտուտի դասախոս, Մյասնիկյանի անվան միջնակարգ դպրոցի ուսմասվար և ուսուցիչ, Երգազավուսարժավարի տնօրեն-սոցիալական, արհեստագիտական մեթոդական տեսուչ և այլն:

1930—1937 թթ. Կ. Մելիք-Օհանջանյանը ղեկավարում է հիմնականում դիտարկական աշխատանքներով: Մենք նրան տեսնում ենք նախ Հայաստանի Գիտությունների ինստիտուտի, ապա՝ Նյուքմանյան կուլտուրայի պատմության, Կուլտուրայի պատմության, Պատմության և գրականության ինստիտուտների գիտական քարտուղարի կամ էլ հին գրականության ու ժողովրդական բանահյուսության սեկտորների վարիչի պաշտոնում:

Իրեն հատուկ եռանդով ու խանդավառությամբ նա կազմակերպում է հայագիտական հիշյալ սջախների գիտական խորհուրդների ու սեկտորների աշխատանքները, հետևում նրանց գործունեության ընթացքին, հոգատարությամբ ու սիրով ղեկավարում երիտասարդ գիտական կադրերի պատրաստման գործով, գլխավորում ու ընթացք է տալիս խմբագրական և հրատարակչական աշխատանքներին, կազմակերպում մի շարք արդյունավոր բանահյուսական գիտարշակներ:

1935 թ. Սովետական Հայաստանի Լուսժողովոմատին առընթեր գործող պետական գիտխորհուրդը, նկատի ունենալով Կ. Մելիք-Օհանջանյանի գիտական ու մանկավարժական վաստակը, նրան շնորհում է գիտա-հետազոտական ինստիտուտների իսկական անդամի և պրոֆեսորի կոչում, իսկ 1962 թ. Հայկական ՍՍԽ Գերագույն Սովետի հատուկ հրամանագրով նրան տրվում է գիտության վաստակավոր գործչի կոչում:

\* \* \*

Մինչև հիմա մենք խոսում էինք մեր հորելյարի կյանքի այն զրվագներէ մասին, որոնք հիմնականում վերաբերում էին նրա ուսումնառությանը, մանկավարժական և գիտա-վարչական գործունեությանը: Այժմ անդրադառնանք նրա բուն ստեղծագործական կենսագրությանը:

Կարապետ Մելիք-Օհանջանյանը իր գրական-գիտական գործունեությունը սկսել է դեռևս ուսանողական նստարանից: 1913 թ. հունվար ամսին նա հանդես է եկել հայոց գրերի գյուտի 1500-ամյակի և տպագրության 400-ամյակի առթիվ Մոսկվայի Հաղարյան ճեմարանում կազմակերպված գիտական նստաշրջանում, կարդալով մի ընդարձակ զեկուցում՝ հայ տպագրության մասին:

1914 թ. պրոֆեսոր Կարապետ Կոստանյանի առաջարկությամբ Մելիք-Օհանջանյանը գրել է մի հետազոտություն՝ «Մամիկոնյանների նախարարա-

1 Տե՛ս Սա. Թումանյանի հաղորդագրությունը «Մշակում»:



կան տոհմը ըստ Փափստոսի Պատմության» թեմայով (ռուսերեն), որը արժանացել է Լավարյան ճեմարանի մասնագիտական դասարանների պրոֆեսորական խորհրդի մրցանակին (4 ամսվա արտասահմանյան գործուղում և մեկական օրինակ նվեր՝ ճեմարանի բոլոր հրատարակություններից)։ Այս աշխատության զեղխներից մեկը զեկուցվել է Կայսերական հնագիտական ընկերության Մոսկվայի բաժանմունքի գիտական նիստում, որի հիման վրա էլ հեղինակն ընտրվել է նույն ընկերության թղթակից-անդամ<sup>2</sup>։

Շարունակելով գիտական գործունեությունը նաև իր կյանքի հետագա բաղամասիվ տարիների ու տասնամյակների ընթացքում, հայազետը հրատարակել է բանագիտական, աղբյուրագիտական, բնագրաբանական ու գրականագիտական մի շարք աշխատություններ, զբաղվել է հայագիտության համար խոշոր արժեք ներկայացնող մի շարք կարևոր սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների թարգմանության շնորհակալ գործով։ Համառոտակի կանգ առնենք նրա այդ աշխատություններից առավել կարևորների վրա։

Այդպիսի գործերից է, նախ և առաջ, մեր հեղինակի՝ «Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահ-նամեում» ու հայ մատենագրության մեջ» խորագրով արևելագիտական-հայագիտական բնույթի ծավալուն (8 տպ. մամուլ) ուսումնասիրությունը՝ լույս տեսած 1934 թ<sup>3</sup>։ Իր այս արժեքավոր հետազոտության մեջ պրոֆեսոր Մելիք-Օհանջանյանը անհրաժեշտ չափով կանգ առնելով Ֆիրդուսու ապրած ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական և գաղափարական երևույթների վրա և խոսելով Ֆիրդուսու՝ իրրև այդ ժամանակաշրջանի խոշորագույն բանաստեղծի ու քաղաքացու մասին, բացահայտում ու վեր է հանում ստեղծագործական այն եղանակները, որ գործադրել է նա Իրանի վիպաշխարհը դյուցազներգելիս։ Գիտնականը հատկապես ծանրանում է Ֆիրդուսու և նրա հեղիավոր «Շահ-նամեի» հայ իրականության մեջ ունեցած արձագանքների վրա։ Նա աղբյուրագիտական-բանասիրական մանրակրկիտ բնության է ենթարկում մինչ այդ հայագիտության և արևելագիտության մեջ պատշաժ լուսարանություն չգտած այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են՝ «Շահ-նամեի» պահլավի գրավոր աղբյուրները հայ մատենագրության մեջ, Ֆիրդուսու դյուցազներգած Իրանի առասպելական ու վիպական մոտիվները Ազաթանգեղոսի և Բուզանդի Պատմություններում։ Բանասերը օրինակներով ցույց է տալիս, թե ինչու Իրանի վիպական մոտիվներն ու «Շահ-նամեն» սակավ են թափանցել հայ մատենագրության մեջ և թե ինչպես դրանք, ընդհանրապես, լավ ընդունելություն են գտել հայ ժողովրդի լայն ներքնախավերում։ Գիտնականի կողմից տվյալ ուղղությամբ կատարված կարևոր եզրակացություններն ու ընդհանրացումները համառոտակի կարելի է ամփոփել հետևյալ հիմնական դրույթների մեջ.

ա) Հայերն ու պարսիկները, իրրև երկու հարևան ժողովուրդներ, իրենց պատմական կյանքում ապրել են քաղաքական և կուլտուրական նմանակ պատմական պրոցես, նրանք ականատես են եղել պատմական այնպիսի իրադարձությունների, որոնք իրենց կնիքն են դրել յուրաքանչյուր երկրի ու ժողովրդի

<sup>2</sup> Զեկուցման ընդարձակ ամփոփումը տե՛ս Ընկերության հանդեսում, 1915։

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի Կուլտուրայի պատմության ինստիտուտի հրատարակած «Ֆիրդուսի» խորագրով գիտական ժողովածուն, նվիրված բանաստեղծի ծննդյան 1000-ամյակին, Երևան, 1934, էջ 1—116։

հետագա հաղթարարմյա կյանքի պատմության վրա (քրիստոնեությունը՝ Հայաստանում, զրադաշտականությունը՝ Իրանում)։ Այս հոդի վրա էլ ահա, երկու ժողովուրդների վիպական ստեղծագործության մեջ մենք գիտում ենք մի շարք ակնբախ նմանություններ։

բ) Աղաթանգեղոսի և Բուզանդի «Պատմությունների» մեջ առկա ակնարկները՝ հայ միջավայրում Իրանի առասպելների ու վեպերի զուգահեռների գոյության մասին, մեզանում «պատմական» իրադարձություններ դիտվելով քննության չեն ենթարկվել համեմատական բանագիտության տեսանկյունով։

դ) Իրանի վիսպաշխարհը, որ դարեր շարունակ արհամարհվել ու հալածանքի է ենթարկվել հայ կղերի կողմից, որպես «փծուն և անճոռնի առասպելք», «անմիտ և անհանճար բանից հարմարանք», «առասպելաց բարբաջմունք», հյուրընկալվել ու զնահատվել է քաղաքական նախապաշարումներից ազատ հայ աշխատավոր գյուղացու խրճիթում, վերամշակվել ու ազգակցվել է մեր ժողովրդական վեպի ամենից սիրված թառան Դավթի բանավոր պատումներին, ծնունդ տալով «Ռոստոմ Զալի» և «Եթան-Մենիժայի» բազմաթիվ հայկական բարբառախոս ուշադրավ նմանակներին ու տարբերակներին։

Վերոհիշյալ ուսումնասիրությունից երկու տարի անց, այն է՝ 1936 թ., Մելիք-Օհանջանյանը հրատարակում է մի ուրիշ ընդարձակ բանագիտական աշխատություն՝ «Լենինը հայ ֆուկլորի մեջ» խորագրով<sup>4</sup>։ Թեմա ունենալով Սովետական Միության բազմազգ ժողովուրդների և գլխավորապես Սովետական Արևելքի և Հյուսիսի ժողովուրդների ժամանակակից նորաստեղծ բանահյուսությունը, գիտնականը բնութագրում է վերջինիս հիմնական ժանրերը, բովանդակության ու ձևի առանձնահատկությունները, համեմատելով այն նույն այդ ժողովուրդների ավանդական բանահյուսության հետ։ Նա հատկապես կանգ է առնում սովետական բանահյուսության մեջ եղած լենինյան ստեղծագործությունների վրա, բացահայտում դրանց գաղափարական և գեղարվեստական հատկանիշները, հանդամանորեն խոսում «Լենին փաշա» հայկական հայտնի հերոսական ասքի մասին։ Մելիք-Օհանջանյանը գտնում է, որ արդի բանահյուսությունը, մասնավորապես վիպական երգն ու «վեպը», որպես մասսաների բանավոր ստեղծագործություն, ուշադրավ է նաև տեսական առումով։ Նրա կարծիքով մեր օրերում առաջ եկած բանահյուսությունը, հատկապես նրա լենինյան ցիկլը, հնարավորություն է տալիս մեզ քայլ առ քայլ հետևելու վերջինիս ծագման՝ զոյացման և աստիճանական վարդացման փուլերին, ծանոթանալ նրա կրած ազդեցություններին, փոփոխություններին և ներկա դրությունը, նրա զոյացման կոնկրետ օրինակի վրա լուսարանել ընդհանրապես վիպական ստեղծագործությունների ծագման ու աստիճանական վարդացման հարցերը։ Բանագետի ըմբռնմամբ սովետական բանահյուսությունը հետաքրքրական է նաև իր ձևի և գեղարվեստական պատկերավորման միջոցների տեսակետից։ Այստեղ քննության արժանի է նաև հին ու նոր բանահյուսության միաձուլման ընթացքը, հին ձևի ու նոր բովանդակության համատեղման երեւելով, հնի փոխակերպումը<sup>5</sup>։ Անհրաժեշտ է նկատի առնել և այն ճշմարտացի գիտողությունները, որ կատարել է Մելիք-Օհանջանյանը «Լենին փաշայի»

<sup>4</sup> Տե՛ս Հայաստանի Պատմության և գրականության ինստիտուտի հրատարակած «Լենինը հայ ֆուկլորի մեջ» ժողովածուի «Ներածությունը», Երևան, 1936, էջ 9—57։

<sup>5</sup> «Լենինը հայ ֆուկլորի մեջ», էջ 14—15։

մասին, իրրե՛ «Սասնա ծռերի» բարերար ազդեցությունը կրած վիպական բանահյուսության ինքնատիպ մի ստեղծագործություն, որն աչքի է ընկնում թե՛ դադափարակա՛ն, և թե՛ դեղարվեստական տեսակետից և որպիսիք քիչ կան ոչ միայն հայկական, այլև հորհրդային Միության ժողովուրդների՝ Լենինին և Հոկտեմբերյան հեղափոխությանը նվիրված բանահյուսության մեջ, մի ստեղծագործություն, որը զերծ լինելով առասպելաբանությունից և կրոնական հաշիշից, աչքի է ընկնում իր ռեալիստական միտվածությամբ<sup>6</sup>։ Քննության առարկա աշխատությունը ուղադրավ մի պործ է թե՛ ինքնին վերցրած՝ իրրե բանագիտական արդիական հարցեր արծարծող հետազոտություն, և թե՛ իրրե տվյալ թեմային նվիրված ժամանակով առաջին ծավալուն աշխատանք։

Հետաքրքրական նորույթներ պարունակող բանագիտական հետազոտություն է և պրոֆ. Մելիք-Օհանջանյանի «Միթրա-Միհր Սասնա ծռերի մեջ» խորագրով ուսումնասիրությունը՝ լույս տեսած 1946 թ., ուր քննության առարկա են դարձած հայ դիցաբանական պանթեոնի մոլթ հարցերից մի քանիսը (Միթրա-Միհրի հալանուն արբանյակները, Ժուկ ու ժամանակի ժողովրդական հավատալիքը, Հայկ համաստեղության անունն ու էությունը)<sup>7</sup>։ Գայթակրդիչ է առանձնապես հեղինակի առաջ քաշած նոր վարկածը մեր ավանդական նախահոր՝ դյուցազն Հայկի վերաբերյալ։ Ըստ այդ վարկածի, Հայկի և Թևի կովին նվիրված հայտնի վիպա-առասպելական դրվագի մեջ պետք է բուռնաշուրկ և րկու տարրեր էթնոսների պատկանող ժողովուրդների դադափարական պայքարի արտահայտությունը։ Մելիք-Օհանջանյանը գտնում է, որ՝ Բել-Քրոնոսը Ասորեստանի պոտենցիալ ուժի անձնավորումն է, իսկ Հայկ-Քրոնոսը՝ Հայաստանինը։ Քանի որ այդ և րկու ժողովուրդները կովում են իրար հետ, ապա բնական է, որ նրանց զերադոյն աստվածներն էլ պայքարի դուրս գան միմյանց դեմ։ Չբավարարվելով լոկ բնական և տրամաբանական այս հիմնավորմամբ, դիտնականը բերում է նաև համապատասխան համոզիչ փաստեր ու փաստարկներ ինչպես հայ, այնպես էլ ուրիշ ժողովուրդների լեզվի ու բանահյուսության, պատմության ու նազդիտության բնագավառներից։

Պակաս հետաքրքրական չէ նաև այն փորձը, որ անում է նա Հայկի կերպարի՝ «Սասնա ծռերի» մեջ ունեցած արծազանգները գտնելու ուղղությամբ։ Հենվելով Մանուկ Աբեղյանի 1908 թ. առաջադրած այն դրույթի վրա, ըստ որի՝ «Մեր հին առասպելների և նոր վեպի մեջ եղած առասպելների նույնությունն այն աստիճան է, որ կարելի է կարծել նույնիսկ, թե նոր վեպը հին վիպասանքն է, որ մինչև այժմ կենդանի մնում է՝ միայն կրելով դարերի պատմական ազդեցությունը... և որ դյուցազնական առասպելները, որոնք հիմք ունին հին հեթանոսական հավատալիքները, միշտ նորոգվելով հարություն են առնում»<sup>8</sup>, Մելիք-Օհանջանյանը հավաստում է, որ փոխանցման, «նորոգման» կամ «հարություն առնելու» ընթացքը վերապրել է նաև Հայկի առասպելը։ Նա հետաքրքիր օրինակներով ցույց է տալիս, որ դյուցազն Հայկը «Սասնա ծռերի» մեջ հանդես չի գալիս իրրե մի միասնական, կուռ ու կոռուցիկ, լիակենդան հերոսական կերպար, այլ որ նրա հատկանշական դիմագծերը ցրված են, վի-

6 Նույն տեղում, էջ 52—56։

7 Տե՛ս Մ. Աբեղյանի անվան դրականության ինստիտուտի հրատարակած «Դրական-բանասիրական հետախուզումներ» ժողովածուի Ա դիրքը, Երևան, 1946, էջ 269—327։

8 Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908, էջ 180—181։



բաբաշխված վեպի մի շարք հերոսների, և գլխավորապես երկու մարդկայինացած հերոսների մեջ: Դրանք են մի կողմից՝ կյանքը ժողովրդի բարօրության համար զոհաբերող, հայրենի երկրի ազատությունն ընդդեմ բռնակալ Մարտ Մելիքի պաշտպանող թաուրան Դավիթը, մյուս կողմից՝ հայրենի երկրի բարեկեցության մասին մտածող, շեներ ու բնակավայրեր կառուցող, սերունդը հովանավորող, աճեցնող, վերջինիս մասին հոգացող, խրատ ու դաստիարակություն տվող Քեռի Ռորոսը, որոնք ստադիալ զարգացմամբ ժառանգել են հին հայկական դիցարանի աստվածներին ու դյուցազունների հայր, ամենակարող Հայկի հիմնական հատկանիշները:

Քննարկված աշխատությունից մեկ տարի անց, 1947 թ., Կարապետ Մեյր-Օհանջանյանը հրապարակ է հանում պատմա-բանասիրական բնույթի մեկ ուրիշ հետաքրքիր հետազոտություն՝ «Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավստոս Բուզանդի» խորագրով, որը հանդիսանում է մի նոր ուշադրավ ներդրում հայ բանագիտության մեջ: Մեկնակետ ունենալով հայ և այլազգի որոշ հայագետների և մասնավորապես Մանուկ Արեղյանի տեսակետը՝ Բուզանդի Պատմության բանահյուսական ակունքների վերաբերյալ, ինչպես և նկատի ունենալով ն. Ազոնցի ու Մարկվարտի կողմից հույն, լատին և պարսկական աղբյուրներից վկայակոչված համապատասխան տեղեկությունները III—IV դարերում Մերձավոր Արևելքում և Հայաստանում տեղի ունեցած պատմա-քաղաքական իրադարձությունների մասին, հեղինակն իր այս գործի մեջ ցույց է տալիս, որ Բուզանդի Պատմության III դարյան 20 և 21-րդ գլուխները, ուր նկարագրված են հայոց Տիրան թագավորի հետ կապված դեպքերն ու դեմքերը, ամբողջապես վիպական ծագում ունեն: Իր այս դրույթը պիտանականը հավաստում է հետևյալ երկու համոզիչ հստակամասններով.

ա) Բուզանդի հաղորդածը Տիրան թագավորի օրոք Հայաստանում կատարված քաղաքական-հասարակական իրադարձությունների վերաբերյալ չի հաստատում նույն այդ իրադարձություններին տեղյակ ժամանակակից օտար պատմական գրավոր աղբյուրների տվյալներով, ուստի և պետք է ենթադրել, որ մեր պատմիչը, ամենայն հավանականությամբ, օգտվել է հայ ժողովրդական վեպից ու գրույցներից:

բ) Բուզանդի հաղորդածներն իրենց բնույթով համընկնում են այն վիպական մոտիվներին, որ մենք գտնում ենք ինչպես հայ, այնպես էլ այլազգի բանահյուսական հուշարձաններում, ուստի և կարելի է հաստատապես ասել, որ դրանց հիմքը եղել են պատմիչին հայտնի համապատասխան բանավոր աղբյուրները:

Այդ են հաստատում նաև Տիրան-Տրդատի կյանքի հետ կապ ունեցող Բուզանդի հիշատակած բոլոր տեղանունները՝ Աղիորսք, Դալարիս-Ածուղ և Ոսխա-Ոխսա, որոնք ոչ թե իրական պատմական աշխարհագրական անուններ են եղած մինչ տիրան-տրդատյան Հայաստանում, այլ անորոշ ու անհայտ վայրեր, որոնք այդպես են «կնքվել» ժողովրդական վիպասանների և գուսանների կողմից: Այդ է հաստատում և Ճարատեկ-Ճանճկեն երիվարի միջադեպը, բանահյուսական շրջիկ մի մոտիվ (տե՛ս «Քյոռ-օղլի», «Կառ ու Քույուկ» և այլն), որը հարակցման կարգով միացել է Տիրան-Տրդատի վեպին և վերամշակվել

<sup>9</sup> Տե՛ս Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», 1947, № 6, էջ 59—74 և № 7, էջ 59—77:

ու տեղայնացվել Հայաստանում ծավալված քաղաքական, ռազմական և հասարակական իրադարձությունների համեմատ<sup>10</sup>։

Վերը նշվեց, որ Կարապետ Մելիք-Օհանջանյանը իր ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքներին զուգընթաց զբաղվել է նաև հայագիտության համար կարևոր արժեք ներկայացնող բնագիտության և ուսումնասիրությունների թարգմանությամբ։ Դիտնականի կատարած այդօրինակ մի շարք թարգմանությունների շարքում առաջնակարգ տեղ է գրավում Մանուկ Արևելյանի «Հայոց հին գրականության պատմության» առաջին հատորի թարգմանությունը (34 տպ. մամուլ)՝ որը լույս է տեսել 1948 թ.<sup>11</sup>։

Պատահական չէր այն հանգամանքը, որ, երբ Հայաստանի ակադեմիան տարիներ առաջ որոշում էր ընդունեց ռուս և այլազգի գիտական հասարակայնությունը ծանոթացնելու ժամանակակից հայագիտության նվաճումներին, առաջին հերթին կանգ առավ Մանուկ Արևելյանի հիշյալ գործի վրա։ Ինչու՞ն էր հիմնավորումը։

Հայոց հին գրականությունը նոր չէ, որ վայելում է համաշխարհային պատմա-բանասիրական մտքի ուշադրությունը։ Խորենացու, Եղիշեի և հետագա դարերի մեր մի շարք մատենագիրների երկերի նշանակությունը չի սահմանափակվում միայն ազգային շրջանակներով։ Այդ «Պատմությունները» նշանակալից արժեք են ներկայացնում նաև Մերձավոր Արևելքի այլևայլ ժողովուրդների (պարսիկների, արաբների, թուրքերի և այլն) անցյալի լուսարանման համար։ Անուրանայի է և միջնադարյան հայ տաղերգուների ստեղծագործությունների համաշխարհային-պատմական նշանակությունը, ստեղծագործությունների, որոնք, Վալերի Բրյուսովի բնորոշմամբ, «մարդկային ոգու ամենաբնականակալից հաղթանակներից են համաշխարհային տարեգրության մեջ»<sup>12</sup>։

Արևելյանի հիշյալ աշխատությունը առանց վարանման կարելի էր ներկայացնել ռուս և այլազգի գիտական հասարակայնության ուշադրությանը՝ իբրև փաստական հարուստ ու հետաքրքիր նյութի վրա խարսխված պատմա-բանասիրական և գրական-քննադատական բնույթի գիտական մի գործ, որն ըստ ամենայնի ճշմարտացի ու ամբողջական զուգափար էր տալիս հայոց հին գրականության պատմության մասին։

Պատահական չէր և ոչ, որ տվյալ թարգմանությունը Հայաստանի ակադեմիան հանձնարարեց պրոֆեսոր Կարապետ Մելիք-Օհանջանյանին, որը կարողացավ հաջողությամբ ռուսերենի փոխադրել ոչ միայն Արևելյանի խորագնամտքի բոլոր կեռմաններն ու նրբերանգները, նրա ամրակուռ տրամաբանության ուրույն դրսևորումները, այլև տալ նրա աշխատության մեջ իբրև օրինակ բերված բազմաթիվ արձակ ու չափաժողովարդ սկզբնաղբյուրների փայլուն թարգմանությունները (Եղիշեի Գողթացու «Եղծ աղանդոցից», Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգությանից» և այլն)։

Կարապետ Մելիք-Օհանջանյանի զրչին պատկանող հայագիտական հաջորդ ուշագրավ աշխատանքը՝ հայ միջնադարյան ղեղարվեստական արձակին

<sup>10</sup> Նույն տեղում, № 7, էջ 76—77։

<sup>11</sup> М. А б е г я н, История древнеармянской литературы, том I, Ереван, 1948.

<sup>12</sup> В. Б р ю с о в, Поэзия Армении, Москва, 1916, էջ 7։



նվիրված նրա ամփոփ ուսումնասիրությունն է, լույս տեսած 1957 թ. իրրի առաջարան Մանուկ Աբեղյանի անվան զրականության ինստիտուտի հրատարակած «Էջեր հայ միջնադարյան զեղարվեստական արձակից» խորագրով ժողովածուի<sup>13</sup>։ Իր այս աշխատության մեջ տալով միջնադարյան հայ զեղարվեստական արձակի ընդհանուր սեղմ բնութագիրը և տվյալ ուղղությամբ մեղանում կատարված աշխատանքների գնահատականը, հեղինակը կանգ է առնում զրական այս ժանրի հանդամանալից ուսումնասիրության անհրաժեշտության հարցի վրա, առաջադրում տվյալ դժով առաջիկայում տարվելիք աշխատանքների ծրագիրն ու հիմնական թեզերը։

Կարապետ Մելիք-Օհանջանյանը, նախ և առաջ, ճշմարտացի բնութագրում է «Հայելի վարուց» անունով միջնադարյան գրույցների ու կարճառոտ պատմությունների հայտնի ժողովածուի և նմանօրինակ մի երկու ուրիշ հավաքածուների («Հարանց վարր» և այլն) ծագումն ու բովանդակությունը, դիտականորեն բացահայտում վերջիններիս ստեղծման հանդամանքները, վեր հանում այն ազդեցությունը, որ ունեցել են զրանք միջնադարյան հայ ինքնուրույն արձակի առաջացման ու ձևավորման գործում։ Այնուհետև նա խոսում է միջնադարյան հայ զեղարվեստական արձակի տարրեր ժանրերի (Վարքարանություն, Խրատականներ, Հրաշապատումներ, Տեսիլքներ, Պարականոն գրքեր, Միտերիաներ) բովանդակության և ձևական առանձնահատկությունների մասին, ցույց տալով զրանցից տմեն մեկի հասարակական և զրական-զեղարվեստական բնորոշ հատկանիշներն ու արժանիքները։ Առանձնապես արժեքավոր է դիտականի այն գրույթը, որով հավաստվում է, թե վերոհիշյալ ժանրերին պատկանող ստեղծագործությունների մի շղալի մասը մեղանում ունենալով թարգմանական բնույթ, բստ էության տարրերով է սովորական թարգմանություններից։ Դրանք, նրա կարծիքով, ավելի շատ վերապատումներ կամ փոխադրություններ են, քան թարգմանություններ։ Մելիք-Օհանջանյանը միանգամայն իրավացիորեն նշում է, որ շատ հաճախ օտար նյութը հայ «թարգմանի» գրչի տակ ազգայնանում էր, երբեմն նոր միջաղեպեր էին ներմուծվում, երբեմն էլ գործույության վայրը Հայաստան էր փոխադրվում ու հայ ընթերցող և ունկնդրող հասարակության մեջ ընկալվում որպես հարապատ միջավայրի գոյի ու դիտակցության արտացոլումներ։ Ելնելով վերոհիշյալ հանգամանքներից հեղինակը արդարացիորեն հուշում է, որ «թարգմանություն» կոչված այդ ստեղծագործությունները պետք է դիտվեն որպես ազգային գրականության զարգացման պատմությունը շաղկապող օղակներ և բստ այսմ քննության առնվեն հայ հասարակական հոսանքների ու այդ հոսանքները բնորոշող զրական հուշարձանների հետ համընթաց<sup>14</sup>։

Անհրաժեշտ է անպայման կանգ առնել Կարապետ Մելիք-Օհանջանյանի հայագիտական մի կարևոր աշխատության վրա ևս, որը լույս է տեսել 1961 թ.։ Դա Հայաստանի, Մերձավոր Արևելքի և մոնղոլների միջին դարերի պատմության հիմնական սկզբնաղբյուրներից մեկի, XIII դարի հայ նշանավոր պատա-

13 «Էջեր հայ միջնադարյան զեղարվեստական արձակից», խմբագրությամբ և առաջարանով Կ. Մելիք-Օհանջանյանի ժողովածուի նյութերն ընթերցին, լեքստը պատրաստեցին և ծանոթագրեցին՝ Ավդալրեղյան Մ., Մկրտչյան Մ. և Սրապյան Ա., Երևան, 1957։

14 Տե՛ս «Էջեր հայ միջնադարյան զեղարվեստական արձակից» ժողովածուի առաջարանը, Երևան, 1957, էջ XXVII։

միշտ Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմության» քննական-համեմատական բնագիրն է, կազմված մեր դասական լավագույն բանասերների մշակած բնագրաբանական օրինակելի սկզբունքներով, սկզբունքներ, որոնք ներդրված են «Պատմագիրք հայոց» հայտնի մատենաշարի Մովսես Խորենացու և մյուս հայ մատենագիրների Պատմություններին նվիրված հատորների մեջ:

Մի քանի տարիների բարեխիղճ ու տքնաշան աշխատանքով զույլս բերված բազմաթիվ ու մեծարժեք մի դործ է դա, արժանի ամենայն երախտագիտության ու գնահատականի: Կատարված աշխատանքի մեծության ու ծանրության մասին մոտավոր պատկերացում տալու համար բավական է հիշատակել, որ տվյալ բնագիրը կազմվել է Գանձակեցու 3 տպագիրների և Մատենադարանում պահվող շուրջ 30 ամբողջական ու թերի ձեռագիրների մանրամասն հետախուզությամբ ու բազմաթիվ ջանքերով:

Քննության առարկա աշխատության արժեքը, սակայն, նրա գիտական-համեմատական բնագիրը չէ միայն: Հատորին կցված է նաև Մելիք-Օհանջանյանի ծավալուն առաջաբանը, որը հանգամանորեն ներկայացված է տվյալ պատմիչի կյանքն ու գրական-հասարակական գործունեությունը, պատմաբանասիրական քննության են ենթարկված նրա «Հայոց պատմության» հորինվածքի, ամբողջականության և աղբյուրների հարցերը: Մանրամասն խոսելով Գանձակեցու Պատմության մասին, որպես XIII դարի մեր մյուս մատենագիրների երկերի սկզբնաղբյուրի, և վերլուծելով ու գնահատելով նրա աշխատության պատմագիտական և գրական-գեղարվեստական արժեքը, հեղինակը միանգամայն իրավացիորեն գիտում է, որ.

ա) «Մեկ ժառանգություն մնացած հարուստ հայ պատմագրության մեջ Կիրակոսի այս երկասիրությունը թե՛ ըստ ժամանակի (ԺԲ—ԺԳ դդ.), և թե՛ հարուստ բովանդակության կողմից առաջնակարգ պատմագրական սկզբնաղբյուր է, որը ընդարձակորեն խոսում է թուրք-թաթարական-մոնղոլական ժողովուրդների, նրանց նվաճումների և նվաճած երկրներում՝ Հայաստանում, Աղվանքում, Վրաստանում և այլուր ստեղծած քաղաքական-վարչական և սոցիալատնտեսական պայմանների մասին»<sup>15</sup>:

բ) «Կիրակոս Գանձակեցին զրչի վարպետ է և կարողանում է իր մտքերն ու հույզերը այնքան պարզ ու պայծառ արտահայտել, որ համակում է բնթերցողին, մեկ-մեկ էլ այնքան է տարվում իր նյութի նկարագրությամբ ու վերլուծությամբ, որ գեղարվեստական հաճույք է պատճառում նրան և բնդլայնում նրա մտավոր հորիզոնը»<sup>16</sup>:

Անհրաժեշտ է հիշատակել նաև Գանձակեցու «Պատմության» ներկա հրատարակությանը ուղեկցող գիտական հարուստ աղարատը (որը բաղկացած է պատմիչի նկարագրած ժամանակներին վերաբերող հայ և օտար զահակայների ժամանակագրությունից, անձնանունների և տեղանունների ցանկերից և հատկապես տեքստաբանական առաջաբանը, որը գիտական-հրատարակիչը խոսում է տվյալ քննական-համեմատական բնագիրը կազմելու հանգամանքների մասին, տալիս Կիրակոսի Պատմության տպագիրների ու մի քանի տասնյակ ձեռագիրների բանասիրական նկարագրությունը, որոնք բոլորն էլ շատ

<sup>15</sup> Կիրակոս Գանձակեցի. Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 2 է:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 22:



կարևոր են պատմագրի նկարագրած ժամանակները պատկերացնելու և նրա Պատմության բազմաթիվ օրինակների առանձնահատկություններն ու արժեքը պարզելու համար:

Առիթից օգտվելով կուգեինք այստեղ նշել Կիրակոսի տպագիրների ու ձեռագիրների բաղդատությունը գործում անվանի գիտնականին աշխատակցած Վաչագանի լուսավորչական գործունեության ու բանիբուն երիտասարդ բանասեր Վախթանգ Գեորգյանի անունը, որը, ինչպես գրել է իր առաջարկում Կարապետ Մելիք-Օհանջանյանը, «ընթերցել է բաղդատվող ձեռագիրը և իր բարեխիղճ ու ջանադիր աշխատանքով նպաստել երևան բերելու կարևոր ընթերցվածք, ըստ այնմ և ընդհանուր գործի հաջողությունը»<sup>17</sup>:

Առանձնապես ծանրակշիռ և հասարակականորեն նշանակալից են այն աշխատանքները, որ կատարել է պրոֆեսոր Մելիք-Օհանջանյանը հայ ժողովրդական վեպի սկզբնաղբյուր-պատումների գրառման, դրանց գիտական հրատարակության և թարգմանության բնամարդում: Այս տեսակետից պետք է առաջին հերթին հիշատակվեն նրա բեղմնավոր հետախույզումները «Սասնա ծռերի» նոր պատումների հայտնաբերման ուղղությամբ: Որքան էլ տարօրինակ թվա, սակայն անհերքելի փաստ է այն, որ մինչև 1930-ական թվականները մենք չենք ունեցել Սասունում ծնված և իր հիմնական բովանդակությամբ, աշխարհագրական տեղավայրերով, գլխավոր դեպքերով ու դեմքերով վերջինիս հետ սերտորեն կապված մեր ժողովրդական վեպի բուն Սասունի պատումները, չնայած այն հանգամանքին, որ դրանց գրառումը մեզանում սկսվել է առկա լին անցյալ դարի 70-ական թվականներից: Կարապետ Մելիք-Օհանջանյանն է այն առաջին գիտնական-բանահավաքը մեզանում, որը հատուկ ուշադրություն դարձնելով այդ խնդրին, հայտնաբերել ու տպագրել է «Սասունցի Գավթի» երկու արժեքավոր պատումները բուն Սասունի բարբառով: Դրանցից առաջինը նա գրի է առել 1932 թ. հուլիսի 24-ին, Թալինի շրջանի Իրինգ գյուղում, բնիկ Սասունի Ճախրական գյուղացի 85-ամյա Քեոի Թամոցից, որը սասունցիների մեջ հայտնի է եղել իբրև լավ բանասաց, իբրև «Սասնա ծռերի» ստուգապատում պատմության միակ գիտակն ու անադարտ պահպանողը: Բանահավաքի վկայությամբ Քեոի Թամոն «Տավթի բաղմունքները» եղելություն է համարել, ասելով միաժամանակ, որ ինքը, իբր թե, տեսել է «Տավթի զիրքը», որը մեկ լիտր է քաշելիս եղել և պահվելիս է եղել Սասունի Գոմաց վանքում, և որ հետագայում կոնվենտի ժամանակ քրդերը այրել են այդ զիրքը:

«Սասնա ծռերի» սասունական երկրորդ պատումը Կ. Մելիք-Օհանջանյանը գրի է առել նույն 1932 թ. հուլիսի 29-ին Թալինի շրջանի Աշնակ գյուղում, դարձյալ բնիկ սասունցի, վերջինիս Գոմրդեր գյուղացի Առաքել Սարուխանյանից, որը «Սասնու Տավթի» իր պատումը լսել է հայրենիքում եղած ժամանակ:

Դացի պատմական հատուկ արժեք ներկայացնող վերահիշյալ երկու պատումներից Կ. Մելիք-Օհանջանյանը անձամբ գրի է առել մեր Վեպի ուրիշ 6 արժեքավոր պատումներ ևս (2 հատ Ալաշկերտի, 1 հատ Մոկաց, 2 հատ Շատախի, 1 հատ Կաճեթի բարբառներով): Վերջիններիս մեջ պետք է առանձնապես նշել հայտնի բանասաց ալաշկերտցի Մանուկ Թորոյանի պատումը, որը իրավացիորեն համարվում է «Սասնա ծռերի» մեզ հայտնի շուրջ 70 պատում-

<sup>17</sup> Կիրակոս Գանձակեցի, Առաջարկ, էջ 88-90:

ներից ամենարեղարձակներից ու լավագույններից մեկը՝ աչքի բնկնելով իր շեշտուն ժողովրդայնությամբ և վիպական զեղարվեստական մեծ արժանիքներով<sup>18</sup>։

Հայ ժողովրդական վեպի բնագավառում Մելիք-Օհանջանյանի կատարած մյուս աշխատատար և ծանրակշիռ դործը դա «Սասնա ծռերի» 1000-էջյա հատորների պատրաստման մեջ նրա ունեցած դործոն մասնակցությունն է։

Հայտնի է, որ երբ տարիներ առաջ Հայաստանի պետհրատը կատարելով Կենտրոնական կոմիտեի այն ժամանակվա քարտուղար Ազատի Խանջյանի ցուցումը՝ իր զեղարվեստական բաժնի վարիչ Եղիշե Չարենցի միջոցով առաջարկեց Մանուկ Աբեղյանին հանձն առնելու «Սասնա ծռերի» ժողովրդական սկզբունադրյուր-պատումների գիտական ամբողջական հրատարակության պատրաստման դործը, մեծանուն հայագետը նկատի ունենալով տվյալ աշխատանքի ծանրությունը, առկա սակավաթիվ բանագետներից իրեն դործակից ընտրեց Կ. Մելիք-Օհանջանյանին՝ քաջ ծանոթ լինելով թե՛ նրա բնատուր մեծ բնդունակություններին, և թե՛ նրա գիտական բազմակողմանի պատրաստությունն ու աշխատասիրությունը։

Սիրով ու ոգևորությամբ 1932 թ. ձեռնարկելով «Սասնա ծռերի» պատումների հրատարակության դործը, Կ. Մելիք-Օհանջանյանը Մանուկ Աբեղյանի հետ միասին մի շարք տարիների ընթացքում հավաքեց, դասավորեց ու խմբագրեց հայ ժողովրդական վեպի հրապարակում եղած տպագիր, անտիպ և նոր գրի առնված շուրջ 53 պատումները։ Իր ուսուցչի ու դործակցի հետ միասին նա պատրաստեց «Օռերի» հատորների յուրաքանչյուր բարրառային խմբին կցված ներածականը՝ բաղկացած համապատասխան քերականական դիտելիքներից, աշխարհագրական, ազգագրական ու այլ կարգի տեղեկություններից, կազմեց անհրաժեշտ ծանոթագրություններ վեպի պատումներում դրսևորված առասպելական, պատմական, կենցաղային և այլ մոտիվների ու երևույթների վերաբերյալ, կազմեց պատումներում դործածված օտար և բարբառային բառերի ու դարձվածքների բնագրական բացատրանք։ Աբեղյանի հետ միասին նա գրեց նաև «Օռերի» առաջին հատորի սկզբում դրված ներածականը՝ վերջինիս մեջ բնութագրելով վեպի ծագումն ու կազմությունն ընդհանրապես և «Սասունցի Դավթի» պատմականությունը, սոցիալական ծագումն ու բնույթը, զեղարվեստական առանձնահատկությունները՝ մասնավորապես։ Մանուկ Աբեղյանի մահվանից հետո (1944 թ.) Մելիք-Օհանջանյանը կազմեց «Օռերի» բոլոր պատումների ճշգրտագրությունը, հատուկ անունների ու առարկայական լիակատար ցանկերը, պատրաստեց վեպի տարածման աշխարհագրական քարտեզը, որոնք լույս տեսան 1951 թ. «Սասնա ծռերի» Բ հատորի Բ մասի վերջում։

«Սասնա ծռերի» հատորները, իրիև հայ ժողովրդի «մանկության» վիպական-զեղարվեստական հոյակապ հուշարձաններ, անսպառ դանձեր են պարունակում ոչ միայն հայագիտության տարրեր մարդերի աշխատողների ուսումնասիրության, այլև մեր դրոշների ու արվեստագետների նորանոր ստեղծագործական հղացումների համար։ Ահա թե ինչու Մանուկ Աբեղյանի և Կառապետ Մելիք-Օհանջանյանի կողմից այդ հատորների վրա կատարված բազմ-

<sup>18</sup> Նշված 8 պատումներից 4-ը տպագրված է «Սասնա ծռերի» Ա հատորում (1936), իսկ 4-ը՝ Բ հատորի Ա դրոշում (1944)։



մամյա բեղմնավոր աշխատանքը ունի կուլտուր-պատմական մնացուկն և անու-  
րանալի արժեք ու նշանակություն:

Հայ ժողովրդական վեպի ընդգլխավորում պրոֆեսոր Մելիք-Սանջանյանի  
կատարած մյուս կարևոր աշխատանքը «Սասնա ծռերի» 10 լավագույն պատում-  
ների ուսեսերեն թարգմանության նորերս ավարտված գործն է, շուրջ 40 տալա-  
գրական մամուլի ծավալով: Այդ գործը թարգմանչի պատրաստած համապա-  
տասխան դիտական ծանոթագրությունների և առաջարանի, ինչպես և նույն  
այդ պատումների հայերեն սկզբնաղբյուրների հետ միասին առաջիկայում  
լույս կտեսնի Մոսկվայում՝ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Հնա-  
գիտության և ազգագրության ինստիտուտի և Մ. Գորկու անվան Համաշխար-  
հային գրականության ինստիտուտի համատեղ հրատարակությամբ, Սիբիրե-  
նական Գիտությունների ակադեմիայի «Գրականության հուշարձաններ» խորա-  
գրով հայտնի մատենաշարով:

«Մոերի» պատումների տվյալ թարգմանության մեջ ցայտուն կերպով  
երևան են եկել մի կողմից հեղինակի բանագիտական խոր իմացությունները,  
մյուս կողմից՝ նրա թարգմանչական մեծ փորձն ու հմտությունը: Այդ թարգմա-  
նությունները աչքի են ընկնում ինչպես սկզբնաղբյուրի բովանդակության  
ճշգրիտ ու հարազատ վերարտադրությամբ, այնպես էլ այդ սկզբնաղբյուրի  
ոգու և երանգավորման պահպանումով, նրա ոճական ու արտահայտչական տ-  
րանսլանսատիվությունների համարժեք հնչեղությամբ:

«Սասունցի Դավիթ» հորեկյանական հյուսվածու համահավաք հրատա-  
րակության ուսեսերեն թարգմանությունը, որը լույս տեսավ 1939 թ., չի կարող  
փոխարինել ներկա թարգմանությանը և հիմք ծառայել բուն գիտական հետա-  
գոտությունների համար, քանի որ այն չունի բառիս իսկական առումով սկզբը-  
նաղբյուրի արժեք: Այդ հրատարակությունը ժամանակին կատարեց և այժմ  
էլ կարող է կատարել մեծ դեր մեր ժողովրդական վեպի տարածման, նրա ընդ-  
հանուր բովանդակության և գաղափարական միտվածության մասին պատկե-  
րացում տալու, հասարակական լայն խավերին ազատասիրության, հայրենա-  
սիրության և խաղաղասիրական ոգով դաստիարակելու գործում: Բրբե վեպի  
բաղմամբով պատումներից կատարված ուրույն մի ծագկաքաղ, համահավաքը  
հաստատական ընթերցողին կարող է պատճառել նաև համապատասխան գեղա-  
գիտական բավականություն: Սակայն նույն այդ համահավաքը չի կարող լիովին  
բավարարել հարցասեր գիտնականի պահանջները՝ ճանաչելու մեր վեպն այն-  
պես, ինչպես որ նա կա, առանց խմբագրական միջամտությունների, առանց  
հապավումների ու հավելումների, իր բնական անաղարտ վիճակում՝ սերտորեն  
միահյուսված ժողովրդական բանաստեղծների ու նրանց ուկնդիրների հարազատ  
միջավայրի հետ: Մինչդեռ Կ. Մելիք-Սանջանյանի կատարած ներկա թարգմա-  
նությունը, իբրև «Մոերի» բուն սկզբնաղբյուր-պատումների բոլոր ամենայնի  
ճշգրիտ թարգմանություն, ընձեռում է բոլոր հնարավորությունները՝ բաղմա-  
կողմանի ու խոր ուսումնասիրելու մեր վեպի բուն բովանդակությունը, նրան  
ծնունդ տվող պատմական միջավայրը, նրա սոցիալական ու քաղաքական  
բնույթը, գեղարվեստական արժանիքները: Այն հնարավորություն է տալիս  
նաև պարզարանելու «Սասունցի Դավիթ» հարաբերությունը մյուս ժողովուրդ-  
ների էպոսների հետ, որոշելու նրա ուրույն տեղը աշխարհի էպիկական ստեղ-  
ծագործությունների շարքում, լույս սփռելու ընդհանուր բանագիտության մեջ  
տակավին բավարար մեկնարանում չգտած տեսական որոշ հարցերի վրա:

նշանակալից է պրոֆեսոր Կարապետ Մելիք-Օհանջանյանի կատարած ներդրումը հայագիտության տարբեր մարզերում: Առանձնապես խոշոր է նրա վաստակը հայ ժողովրդական վեպի սկզբնաղբյուր-պատումների հայտնաբերման, գիտական հրատարակության, թարգմանության և ուսումնասիրության գործում:

#### ЗАСЛУЖЕННЫЙ АРМЕНОВЕД

(К 70-летию со дня рождения проф. К. А. Мелик-Оганджаниян)

А. Т. ГАНАЛАНЯН

(Р е з ю м е)

Профессор Карапет Агабекович Мелик-Оганджаниян является одним из распространителей и продолжателей лучших традиций классического арменоведения и востоковедения, бессменным учителем и наставником многих представителей среднего и младшего поколения современных арменоведов. Он родился 20 февраля (4 марта) 1893 г. в сел. Калер, Мегринского района Армянской ССР. Среднее образование получил в Московском Лазаревском институте, а высшее — в Берлинском университете.

Почти полвека проф. Мелик-Оганджаниян занимается своим любимым делом — плодотворной педагогической и научной работой. Многие годы он преподавал в ереванских средних и высших учебных заведениях, занимал ответственные должности в ряде научных учреждений.

Перу проф. Мелик-Оганджанияна принадлежат многие работы, имеющие важное значение для арменоведения. К числу их относятся многочисленные фольклористические, источниковедческие, литературоведческие труды, издания и научные переводы первоисточников, важнейшими из которых являются: «Фердоуси и эпические мотивы Ирана в Шах-наме и в армянских источниках» (1934), «Ленин в фольклоре» (1936), «Митра-Михр в эпосе Сасна Црер» (1946), русский перевод I тома «Истории древнеармянской литературы» маститого арменоведа, покойного академика Манука Абегяна (1948), критико-сравнительный текст «Истории Армении» Киракоса Гандзакеси с развернутым историко-филологическим предисловием (1961) и т. д.

Особенно значителен вклад проф. Мелик-Оганджанияна в области выявления, записи, научной публикации, изучения и перевода новых вариантов армянского народного эпоса «Давид Сасунский». Совместно с Мануком Абегяном он опубликовал замечательные тома эпоса «Сасна Црер», охватывающие около 70 вариантов нашего эпоса с обширным предисловием и богатым научным аппаратом. Весьма ценен также недавно законченный ученым перевод на русский язык десяти лучших вариантов «Давида Сасунского» (объемом около 40 печатных листов).

Высоко оценивая педагогические и научные заслуги К. А. Мелик-Оганджанияна, правительство Советской Армении в 1935 г. присвоило ему звание профессора, а в 1962 г. — заслуженного деятеля науки.